«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 54-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 54-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հուլիսի 20-ի «**Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին**» N 54-Ն հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ գլխի 43-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«43. 6-րդ դասարանում «Կերպարվեստ» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ «Երաժշտություն» ուսումնական առարկան՝ երկրորդ կիսամյակում: 7-րդ դասարանում «Երաժշտություն» ուսումնական առարկան դասավանդվում է առաջին, իսկ «Կերպարվեստ» ուսումնական առարկան՝ երկրորդ կիսամյակում»:

2) 3-րդ գլխի աղյուսակ 16-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ 16

Տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող միջին, ծանր և խորը մտավոր ֆունկցիայի խանգարում ունեցող երեխաների անհատական ուսուցման ուսումնական պլան

Ուսումնական առարկաները	**Շաբաթական ժամերի քանակը**											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Լեզու և ընթերցանություն	3	3	3	3	3	3	3	3	3	3	3	3
Մաթեմատիկա	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
Ես և շրջակա աշխարհը	1	2	2	2	1	1	1	1	1	1	1	1
Տեխնոլոգիա (Ձեռքի աշխատանք)	1	2	2	2	1	2	2	2	2	2	2	2
Բնագիտություն	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	1
Հայրենագիտություն	-	-	-	-	1	1	2	2	2	2	2	2
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	11	11

»: